ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ արդարադատության նախարարության 2024թ. կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գույքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-24/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.01.2024թ. ժամը 11:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Ասատրյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Հրաչ Արևշատյանը, Մայիս Հովհաննիսյանը,
քարտուղար՝ Անի Ահարոնյանը:

Օրակարգ
Աճուրդի արդյունքների անփոփում և գնահատում

1. Աճուրդի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-24/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները.

1. «Ավյան» ՍՊԸ /ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթ 23/

2. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և տեխնիկական բնութագիրը բավարարում է հրավերի պահանջներին:

4. Հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների առաջարկած գները և նախահաշվային գինը

չափաբաժնի համարը	Ծառայության անվանումը
1	***գույքագրման ծառայություններ***

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	«Ավյան» ՍՊԸ	2 400 000 AMD	2 350 000 AMD	0 %	2 350 000 AMD	

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

5.1 Հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:
5.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, որի հիման վրա որոշեց՝

1. Հակադարձ աճուրդի արդյունքում ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ավյան» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել ընտրված մասնակից:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Վահագն Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հրաչ Արևշատյան

_____ Մայիս Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Անի Ահարոնյան